Ս. ՊԱՏԱՐԱԳ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ, ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Օգոստոսի 23-ի կիրակի օրը սպասածից ավելի մարդաշատ էր Մայր Տաճարը: Հավատավոր հայորդիները եկել էին ունկնդրելու երկար բացակայությունից հետո վերջապես Մայր Աթոռ վերադարձած Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական պատգամը:

Օրվա պատարագիչն էր Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը:

Պատարագի դպրաց բաժինը երգում էր Լոս Անջելեսի Ս. Սարգիս Հայկականեկեղեցու դպրաց դասի «Խաչատուրյան» երգչախումբը, բարեշնորհ Ստեփան սրկ. Կյոզյումյանի ղեկավարությամբ: Երգչախմբի 34 անդամների հետ մեկտեղ Ս. Պատարագի երգեցողությանը մասնակցեցին նաև Լոս Անջելեսից և Պոլսից ժամանած 149 ուխտավորներ:

«Խաչատուրյան» երգչախումբը հիմնվել է 1977-1978 տարիներին Լոս Անջելեսում վերահաստատված պոլսահայերի կողմից: Նրանց թվում էին Պոլսի տարբեր երգչախմբերի նախկին անդամներ՝ դպիրներ, որոնք շարունակում էին իրենց կիրակնօրյա դպրության պարտականությունը կատարել զանազան եկեղեցիներում:

Ստեփան սրկ. Կյոզյումյանի, Սարգիս Սեթեյանի, Երվարդ Նիզամյանի և Կարապետ սրկ. Շահնազյանի նախաձեռնությամբ և ԱՄՆ-ի Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վահե արքեպս. Հովսեփյանի աջակցությամբ հիմնվեց դպրաց դասի «Խաչատուրյան» (ի հիշատակ Թրքահայոց Պատրիարք, ԱՄՆ-ի Արևմտյան թեմի առաջին առաջնորդ և Պոլսի Ս. Խաչ դպրեվանքի հիմնադիր ու վանահայր Տ. Գարեգին արք. Խաչատուրյանի) երգչախումբը:

Հընթացս Սուրբ Պատարագի, Ավագ Սուրբ Սեղան բարձրանալով, «Հայր մեր»-ից առաջ ներկա մեծաթիվ հավատացյալ ժողովրդին և հյուրերին իր հուզիչ խոսքն ուղղեց Նորին Սուրբ Օծությունը.

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն».

«Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք, որպէս ասաց Աստուած, թէ բնակեցայց ի նոսա, եւ գնացից ի նոսա, եւ եղէց նոցա Աստուած, եւ նոքա եղիցին իմ ժողովուրդք» (Բ ԿՈՐՆԹ. Զ 16):

Այսօր այս սրբական բեմից ինչպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու բոլոր բեմերից այս խոսքերը կարդացվեցին՝ հունկնդրություն մեր հավատացյալ ժողովրդին՝ Պողոս առաքյալի կողմից գրված այս բառերը: Դուք՝ մարդ էակներ, ինչ գույնի ալ որ պատկանիք, ինչ դասակարգի ալ որ պատկանիք, ինչ ցեղի էլ որ ծնունդ լինեք, դուք մի մոռանաք, որ Աստուծո տաճարն եք, կենդանի Աստուծո տաճարը: Եվ

Աստված ասաց՝ ես այդ տաճարում եմ բնակվելու և այդ ժողովրդի մեջ եմ գնալու և այդ ժողովուրդը լինելու է իմ ժողովուրդը:

Կյանքը, որ մենք ապրում ենք, Աստծու գերագույն տուրքն է, ամենեն ընտիր, թանկագին տուրքը, որ մարդ կարող է երբևիցե երևակայել կամ ունենալ: Եվ մենք այդ կյանքի տնտեսներն ենք: Այդ կյանքը ապրելու, այդ կյանքով լիարժեք գործելու, Աստծուն արժանի և Աստծուն հաճելի գործ կատարելու, որպեսզի արժանի լինենք մենք այդ նվերին ստացմանը, կյանքին, որ մեկ համար մեր ամենից թանկ բանն է մեր ամբողջ գոյության ընթացքին: Դրա համար ես այսօր փառք և գոհություն եմ տալիս Աստծուն, որ այդ կյանքը վտանգող հիվանդությունից ինձ ազատեց և վերադարձրեց առողջության և ի խորոց սրտի այսօր այս Սուրբ Սեղանի առջև ծնրադիր դեպի Աստված եմ բարձրացնում իմ աչքերը և ասում եմ՝ փառք Քեզ, Աստված, փառք Քեզ, գոհություն Քեզ, որ ինձ իմացուցիր առողջության արժեքը: Եվ այդ կյանքը ապրելու նախապայմաններից մեկը և հիմնականը առողջությունն է: Այս առիթով շնորհակալություն եմ հայտնում մեր ժողովրդի բոլոր կավակներին և՛ Հայաստանում՝ Մայր Հայրենիքում, և՛ արտասահմանում, որոնք իրենց լուռ աղոթքներով և բարեմաղթանքներով ինձ կորացրին և կհավատամ, որ իրենց աղոթքները բժիշկների դեղերի և բժիշկների դարմանումների չափ, եթե ոչ ավելի դեր ունեցան Մեր առողջության վերականգնմանը իմ տկար անձիս համար: Եվ ուխտ եմ կատարել, որ դրանից հետո ինչ կյանք էլ ունենամ, այդ կյանքը պիտի չանամ իմ մարդկային տկարությունների սահմաններին մեջ Իրեն ընծայել՝ Աստծուն, իմ ժողովրդի միջից առավել նվիրվածությամբ, քանիցս որ արել եմ 46 տարիներ շարունակ իմ հոգևորական ձեռնադրությունից այս կողմ:

Փառք Աստծուն և պատիվ մեր ժողովրդին, առողջություն ձեր բոլոր հիվանդներին և բոլորդ էլ առաջնորդվեք այս գիտակցությամբ, որ դուք տաճարն եք Աստուծո և տաճարը մաքուր պահեք, Աստված է, որ այնտեղ է բնակվում և արժանի եղեք աստվածային ներկայությանը, որպեսզի արժեցնեք այն բարիքը, որ Աստված տվել է մեզ կյանք կոչված այս աքանչելի ապրումով, որ մարդու համար իր գոյությունը արժևորող երևույթն է այս երկրի վրա և մինչ անդենական աշխարհ:

Այսօր իմ խոսքի երկրորդ բաժնում ես ուզում եմ իմ խոր գնահատանքը հայտնել, որ մեկ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելության են եկել հեռավոր Լոս Անջելեսից Խաչատուրյան երգչախմբի անդամները և նրանց բարեկամները և այսօրվա Պատարագը իրենք են երգում այս սրբազնասուրբ Մայր Տաճարին մեջ, որ նախատիպն է, սկզբնատիպը աշխարհի բոլոր հայ եկեղեցիներուն առաջին օրից, երբ պետականորեն ճանաչվեց քրիստոնեությունը հենց այստեղ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դարձավ մեր եկեղեցիների նախատիպը: Եվ ես սիրում եմ ասել, որ այնտեղ, ուր մի նոր հայ եկեղեցի է կառուցվում, այնտեղ Սուրբ Էջմիածնի լույսից մի կաթիլ է ցողում Մայր Աթոռից, մեր ծննդավայրից մի նոր լույս է ծագում, ինչ ուրիշ անուն էլ որ ունենա այդ եկեղեցին՝ Սուրբ Հակոբ, Սուրբ Գևորգ կամ Սուրբ Հովհաննես, այնտեղ

Լուսավորիչն է իր տեսիլքովը ապրում և Էջմիածինն է իր ժողովրդի հոգու մեջ տաճար դառնում Աստուծո կենդանի:

Այսօր Ամերիկահայոց Արևմտյան թեմի առաջնորդ Սրբազանի գլխավորությամբ և առաջնորդարանի հովանավորությամբ Խաչատրյան երգչախմբի ներկայությունը և Պատարագի երգեցողությունը մեկ մեծապես հրճվեցնում է, որովհետև մենք կգում ենք այն կենդանի կապը, որ կար ժողովրդի և իր հոգևոր կենտրոնի միջև: Ապրի՛ք, Սրբազան, ապրի՛ք դուք, երգչախմբի անդամներ: Ես վստահ եմ, որ այն ապրումը, որ այս Պատարագի ընթացքում դուք ձեր հոգու մեջ եք ծաղկեցնում, այդ ապրումը պիտի տանեք ձեր կավակներին, ձեր բարեկամներին, ձեր ազգականներին, ձեր բոլոր-բոլոր ծանոթներին, թե դուք ձեր կյանքում երջանկությունը և պատիվը ունեցաք երգելու այն տաճարում, որ մեր «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի մարմնացումն է:

«Եկայք, շինեսցուք Սուրբ կխորանն լուսոյ» ձեր երգերով, ձեր շարականներով, ձեր աղոթքներով է, որ այդ տունը պիտի կանգնի կենդանի: Դուք երգեցիք այսօր այն տաճարում, որտեղ երգել է, մանավանդ երգեր գրել է Կոմիտասը: Դուք երգեցիք այն տաճարում, որտեղ նշանավոր երաժշտագետ Թաշչյանի մաքրագրած և կարգավորած շարականներն են կյանքի կոչվել և տարածվել այստեղից ուրիշ կողմեր, աշխարհի չորս ծագերը: Դուք երգեցիք այն տաճարում, ուր Լուսինե Զաքարյանի ձայնն է հնչել և որքա՜ն մեծ երգիչների ձայներն են հնչել: Դուք այսօր, մի՛ մոռանաք, շաղախվեցիք Սուրբ Էջմիածնի պատմության հետ: Էջմիածինը մտավ ձեր հոգիների մեջ, ձեր աղոթքի կենդանի տաճարի մեջ, որ ժողովուրդն է և այդ ժողովուրդի մեկ մասնիկն եք դուք:

Բարձրորեն գնահատում եմ և ցանկանում, որ ուրիշներ ևս կարենան նման մտածումներով գալ և իրենց կյանքը միախառնել այս տաճարի այս հոգևոր ժառանգությանը հետ:

Երրորդ խոսքը ես ուղղում եմ 1700-ամյակի առիթով կազմակերպված ուխտագնացությանը մասնակցող այն ուխտավորներին, ովքեր այսօր ներկա են այս Մայր Տաճարում և որոնց հանդեպ ես ունեմ հատուկ գնահատանք և հայրական օրհնություն: Բոլորդ էլ լավ եք իմացել, որ մինչև 2001 թվականը ամեն տարի ուխտագնացություններ են կազմակերպվելու ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Պատիվ նրանց, հարգանք նրանց, գնահատանք նրանց, ովքեր ուխտագնացության գաղափարը կենդանի ձևով արտահայտում են իրենց կյանքի միջով: «Ուխտ տացիք և կատարեցէք»,-ասում է Աստվածաշունչ Մատյանը: Ուխտ տացինք Աստծու հետ, ուխտ խոստում աստծուն՝ հավատարիմ մնալու: Նա, ով ուխտ կկատարի, նա ինքն է, որ կկերպարանափոխվի: Սա զբոսաշրջիկության, տուրիզմի հատուկ այցելություն չէ: Դուք չեք եկել քարերը տեսնելու համար, վանքերը դիտելու համար: Դուք եկել եք ձեր հոգին շաղախելու համար հոգևոր այն ժառանգությանը, որ մեր Եկեղեցին վերածում է կենդանի հավատքի:

Ուխտավորներ, դուք մի՛ նայեք արտաքին նյութեղեն երևույթներին: Մեր տաճարները այնքան փայլուն չեն նյութեղեն կառուցվածքներով,

հակառակ իրենց ճարտարապետական մեծ արժեքին: Խնամված չեն, ոմանք ավերակ են, նորոգության կարոտ: Բայց քարերը կխոսին ականջ ունեցողին համար: Բացեք ձեր ներքին ականջները, ձեր հոգեկան ընկալչությունը և լսեցեք այդ ձայները: Այդ քարերուն մեջ, ձեռագիրներուն մեջ, խաչքարերուն մեջ, մագաղաթներուն մեջ հոգին է, որ կխոսի: Քարը չէ, որ կխոսի, քարին մեջեն Աստված է, որ կխոսի, մեր հայրերն են, որ կխոսին: Եվ պիտի գալ ու նորոգված հոգիով պիտի վերադառնալ՝ այս է ուխտագնացության բուն իմաստը: Ես կուզենայի այս առիթով մեր ժողովուրդի բոլոր կավակներին մի խոսք ուղղել այս սրբական բեմից: Մինչև վերջերս մենք այն ընդհանուր գաղափարով էինք առաջնորդվում, այն ընդհանուր տպավորությունն էինք ընդհանրապես փայփայում, որ Հայաստանը բաց թանգարան է: Որ երբ մարդիկ կգային, կտեսնեին հին-հին դարուց հիշատակ: Ո՛չ: Ձեզի կրսեմ ո՛չ: Հայաստանը կյանք է, կյանք, ապրող ժողովուրդ է: Եկեղեցին վերանորոգված սյուն չէ մեր ժողովրդի կյանքին մեջ:

Մի՛ տեսնեք միայն քարերու հուշարձանները, տեսեք այն ժողովուրդի կավը, հոգին, որ ապրեցնում է մեզ: Գացեք ոչ թե քարերի մասին խոսեցեք, այլ խոսեցեք ժողովուրդի մասին: Տեսաք մեր երիտասարդներին: Երբ Էջմիածին կգաք, գնացեք Գնորգյան Հոգևոր Ճեմարանը: Այսօր ամառ է, մեր աշակերտները այնտեղ չեն: Հարյուր տասը աշակերտներ այնտեղ պատրաստվում են հոգևոր առաքելության համար: Ե՞րբ է եղել, որ մենք ունեցել ենք այսպիսի թվով աշակերտություն Հոգևոր Ճեմարանին մեջ: Գացեք Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը: Տեսեք ինչքան կիրակնօրյա վարժարաններին, ժողովրդին գրականություն է տարածվում, ուսուցում է կատարվում: 21 օգոստոսին փակվեց երկշաբաթյա այն դաստիարակչական համաժողովը, որ անցկացվեց Ղարաբաղի մեջ: 150 ուսուցիչներից ավել եկան, կազմավորվեցան, սովորեցին ինչպես բացատրել աշակերտներին Սուրբ Գիրքը, ինչպես բացատրել Եկեղեցու տոները, երգերը և հայ ժողովրդի, Հայ Եկեղեցու հոգևոր ժառանգությունը, գրականությունը, պատմությունը, մի խոսքով, նոր շունչ կա մեր ապատ ու անկախ հանրապետության այս նոր շրջանին մեջ:

Մայր Աթոռը Մայր Հայրենիքի հետ միասին ծաղկում է: Այո՛, պարզ է, թե մեր ժողովուրդը տնտեսական, ընկերային պայմանների մեջ շա՛տ-շա՛տ կարիքներ ունի: Նեղություններուի միջից ենք անցնում: Բայց դա ժամանակավոր է: Ինչ որ ժամանակեն վեր կմնա, դա հոգեկան այն ստեղծագործությունն է, որ մենք կատարում ենք այսօր իբրև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և իբրև Հանրապետություն Հայոց դժվար, շատ դժվար պայմանների տակ: Բայց Հայրենիքը և Մայր Աթոռը Հայաստանի մեջ բնակվող ժողովուրդի համար չէ միայն: Ամբողջ հայ ժողովուրդը իր մեջ կընդգրկե: Ուր էլ լինեք՝ Միջին Արևելք, Ծայրագույն Արևելք, Հարավային Ամերիկա, Հյուսիսային Ամերիկա, Կանադա կամ Եվրոպա, դուք քաղաքացիներն եք Հայաստանի: Ինքնության թուղթը չէ, որ կճշտե մեր բուն պատկանելիությունը, ապրումն է, զգացումն է, մասնակցությունն է: Ձեր քրտինքը խառնեցեք, որպեսզի ձեր ձեռքին հետքը լինի այս Մայր

Աթոռին մեջ, որպեսզի ձեր կնիքը լինի Հայրենիքի վերաշինության այս նոր շրջանին և հատկապես ապատ ու անկախ մեր Հայրենիքին մեջ:

Սիավասիկ, եղբայրներ և քույրեր, ինչ մտածումներով առաջնորդված, ես կողջունեմ ձեզ բոլորիդ այսօր՝ իմ խոր գնահատանքը հայտնելով բոլորիդ ձեր այցելության համար, ես կուզենայի մի անգամ ևս հիշեցնել, որ դուք ինչպես եկաք, ես չգիտեմ, բայց վայ ձեզի, հապար անգամ վայ ձեզի, եթե երթաք ինչպես որ եկաք: Ձեզ կարող վերադառնալ այնպես, ինչպես էիք գալուց առաջ: Մագնիսով բռնվեցիք: Այդ մագնիսը Սուրբ Էջմիածինն է, Հայաստանի հողն է, այդ հողին վրա մեր հավատքին վկայություններն են: Մագնիսված, ներթափանցված վերադարձեք և գնացեք ու ասեք՝ վարդը վարդ է, փուշ ունի, փուշը ոտքի տակ, բայց վարդին բույրը մենք կգրենք Հայաստան: Այս թող ըլլա իմ պատգամը ձեր բոլորին: Աստծու տաճար եք, Աստված ձեր մեջ կբնակի և եթե դուք իսկապես ժողովուրդ եք, եղեք Աստուծո ժողովուրդ և Աստված կիտսի ձեզի այս սուրբ Տաճարին մեջեն, գնացեք և դարձեք հիմա թարգմանները մեր հոգևոր տան, և բոլորդ էլ մի անգամ ձևով մը ևս մկրտվեցիք այս ուխտագնացության առիթով, գացեք և այդ նոր մկրտության շնորհները տարածեցեք ձեր շրջապատի մեջ և փառք տվեք Հոր Աստծուն, Որդվույն և Սուրբ Հոգույն հավիտյանս հավիտենից. ամեն»:

Հավարտ Սուրբ Պատարագի, կատարվեց Հոգեհանգստյան կարգ:

Վերջում Վեհարանի գեղեցիկ հյուրասրահներից մեկում Ամենայն Հայոց Հայրապետը հյուրընկալեց արտերկրից ժամանած հայորդիներին: